community

The New Apostolic Church around the world

04/2016/AM

Ընթանալ Հոգով

Հոգեզալուստ 2016՝
Ժամերգություն

Դավանաբանություն՝
Ժամերգություն և օրհնանքի արարողություններ

Դավանաբանություն՝
Մեղքերի թողություն

New Apostolic Church
International

Աստծո զենքերով

Ն.Գ.Ս. դվնոտեոշվի

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Գեդեոնի պատմությունը մեզ քաջ ծանոթ է, Գեդեոնը մեծ բանակով կռվում էր մեդինացիների՝ Իսրայելի թշնամիների դեմ: Նրա բանակը բաղկացած էր 42.000 զինվորներից: Սակայն Աստված ասաց նրան. ,, Թվով շատ է այն ժողովուրդը, որը քեզ մոտ է,,: Եվ նա Գեդեոնին հրահանգեց փոքրացնել բանակը այնքան, որ մնար ընդամենը 300 մարդ: Այդ փոքր զորքը պետք է հրաժարվեր նորմալ զենքերից և իր հետ միայն շեփորներ և ջահեր վերցներ: Դա հակառակ էր ողջ բանականությանը: Ինչպե՞ս պետք է ջահերով և շեփորներով թշնամու հսկայական բանակի դեմ կռվեն: Սակայն Գեդեոնը վախենում էր Աստծուց և մտածում. եթե Աստված մեզ կոչ է անում պայքարել այս զենքերով, մենք դրանցով էլ կհաղթենք: Մարդկային տեսանկյունով դա լիովին անմտություն էր, բայց, քանի որ Գեդեոնը աստվածավախ էր և վստահում էր Աստծուն, այդ զենքերով էլ գնաց կռվելու, և նա հաղթեց թշնամուն, Աստված հաղթանակը Գեդեոնին նվիրեց:

Աստված ցանկանում է, որ մենք նրա զենքերով պայքարենք, ոչ թե երկրային: Մարդիկ ուզում են ուժով և հզորությամբ պայքարել: Եվ ուժեղը ուզում է պայքարից հաղթանակով է դուրս գալ: Բայց Աստված ասում է. թող այդ զենքերը մի կողմ, օգտագործիր աղոթքի, պատվիրանների հանդեպ հնազանդության, ներելու պատրաստակամության, համբերության և Աստծո սիրո զենքերը:

Եկեք Աստծո զենքերը հարձակումների դեմ օգտագործենք: Դա առաջին հայացքից կարող է անմիտ թվալ, սակայն այն գործում է, փորձեք այն մեկ անգամ:

Սրտագին ողջույններ, Ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

Ընթանալ ըստ Հոգու

Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի կոնգրես կենտրոնից ժամերգությունը հեռարձակվել է Եվրոպայի համայնքներ

Լուսանկարը՝ Ջեսիկա Քրեմեր, Մարսել Ֆեյրե և Օլիվեր Ռյութեն

Գաղատացիներին 5,25

Եթե ապրում ենք Հոգով, ըստ Հոգու էլ ընթանանք:

Սիրելի եղբայրներ ու քույրեր այստեղ և հեռարձակվող բոլոր համայնքներում, այս տարվա Հոգեգալստյան տոնին նախ մենք կլսենք աստվածաշնչյան ընթերցում՝ Գործք առաքելոցի 2-րդ գլխի 1-4 և 12-21 նախադասությունները. Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծ երկնքից հնչեց մի ձայն, սաստիկ հողմից եկած ձայնի նման և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս:

Բոլորը զարմանում էին և միմյանց ասում. „ Ի՞նչ կարող է լինել սա„: Իսկ ուրիշները, ծաղրելով, ասում էին. „ Նոր գինուց հարբած են„: Պետրոսը Տասնմեկի հետ վերկենալով, բարձրացրեց իր ձայնը և ասաց. „ Ով հրեաստանցիներ և դուք ամենքդ, որ Երուսաղեմում եք բնակվում, այս ձեզ հայտնի թող լինի, և իմ խոսքերին ականջ դրեք, սրանք հարբած չեն, ինչպես դուք եք

կարծում, քանի որ դեռ առավոտյան ժամը ինն է, այլ՝ այս այն է, որ ասվեց Հովել մարգարեի բերանով / Հովել 3, 1-5/: „ Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին,- ասում է Աստված, - որ իմ Հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա, և ձեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարեանան և ձեր երիտասարդները տեսիլներ և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, և իմ ծառաների ու իմ աղախինների վրա այն օրերին իմ Հոգուց պիտի թափեմ, և նրանք պիտի մարգարեանան: Եվ վերը, երկնքում զարմանալի գործեր՝ պիտի ցույց տամ, իսկ ներքևում, երկրի վրա՝ նշաններ. արյուն և հուր և ծխի նշաններ, արեգակը պիտի խավար դառնա, և լուսինը կարմիր, ինչպես արյուն, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երևելի օրը: Եվ պիտի լինի այնպես, որ ամեն ոք, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի„:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ինչպես ամեն մի եկեղեցական տոն, այնպես էլ Հոգեգալստյան տոնը ամենից առաջ շնորհակալության տոն է, մի հնարավորություն, երբ հավատացյալները հավաքվում են, որպեսզի Աստծուն առանձնահատուկ շնորհակալություն ասեն՝ Սուրբ Ծննդյան ժամանակ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի մարդացման համար, Զարչարանաց ուրբաթին՝ Հիսուս Քրիստոսի զոհաբերության համար, Զատիկին՝ Հարության, Համբարձմանը՝ այն խոստման համար, որ Քրիստոսը նորից գալու է:

Հոգեգալստյանը հավատացյալները հավաքվում են, և շնորհակալություն ասում Աստծուն Սուրբ Հոգու ուղարկման համար:

Եկեք մի պահ հայացք գցենք աշակերտների ժամանակաշրջանին: Հիսուսի աշակերտները կարողանում էին առանձնահատուկ ձևով՝ Աստծու ներկայությունն ապրել՝ Հիսուս Քրիստոսով նրանք ճանաչեցին Աստծուն: Այսօր չենք կարող պատկերացնել, թե ինչ էր դա նրանց համար: Նրանք ապրեցին այն, որ Աստված իր Որդով մոտ էր նրանց: Նա խոսում էր նրանց հետ, ուսուցանում էր նրանց, մխիթարում էր նրանց: Նա աղոթում էր նրանց հետ: Նա պաշտպանում էր նրանց, երբ՝ նրանց վրա հարձակվում էին, նրանց քննադատում էին: Դա աշակերտների համար առանձնահատուկ էր, երբ նրանք ապրում էին Աստծո մոտիկությունը: Երբ նրանք ճիշտ ըմբռնեցին, Հիսուսն ասաց. „ Ես թողնում եմ աշխարհը և գնում եմ Հոր մոտ„ / Հովհ. 16;28/: Դրան հետևում է Հոր ամբողջ սերը Հիսուսի խոստման միջոցով. „ Եվ ես պիտի աղաչեմ Հորը, և նա մի այլ Մխիթարիչ կտա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի՝ Ճշմարտության Հոգին, / Հովհ. 14;16,17/: Քանի որ Աստված ուղարկել է Սուրբ Հոգին, ինչպես այն ժամանակ աշակերտները, այսօր էլ մենք կարող ենք ապրել Աստծո մոտիկությունը: Այլապես մենք նորից ետ կգնայինք դեպի հին ժամանակները, երբ Աստված երկնքում էր բնակվում, շատ հեռու:

Ինչը Սուրբ Հոգին ոգեշնչել է, պետք է Սուրբ Հոգին նաև մեկնաբանի:

Սուրբ Հոգու միջոցով Հիսուսն ապրել է աշակերտների սրտերում: Սուրբ Հոգու միջոցով նրանք կարողացան ապրել այն, թե ինչպես է Հիսուսը նրանց հետ աղոթում, ինչպես է նրանց մխիթարում, թե ինչ մոտիկ է նրանց, ինչպես է նրանց հետ խոսում, ինչպես է նա նրանց ուսուցանում:

Քանի որ Աստված աշխարհ ուղարկեց Սուրբ Հոգին, կարող ենք այսօր մենք ապրել Աստծո մոտիկությունը: Աստված խոսում է մեզ հետ, նա մխիթարում է մեզ, նա պաշտպանում է մեզ, Սուրբ Հոգու միջոցով օգնում է մեզ: Ես կարծում եմ , որ դա պատճառն է շնորհակալության: Հոգեգալուստն այն օրն է, երբ եկեղեցին, որը հիմնել է Հիսուս Քրիստոսը, առաջին անգամ տեսանելի դարձավ: Կարելի էր այն տեսնել, Քրիստոսի եկեղեցին, որտեղ մենք կարողանում ենք փրկություն գտնել: Նաև դրա համար կարող ենք մենք շնորհակալ լինել: Ուրիշ որտե՞ղ կարող են փրկություն

գտնել: Դա կլինի միայն Քրիստոսի եկեղեցում:

Քրիստոսի եկեղեցին նաև հավատացյալների միություն է: Եղբայր, քույր, դու կարո՞ղ ես պատկերացնել, որ ամբողջովին միայնակ ես, որպես առանձին պայքարող, դու ամբողջովին միայնակ ես կանգնած: Ինչ կլինեինք մենք առանց հավատացյալների միաբանության: Ինչ կլինեինք մենք առանց Աստծո զավակների միասնության, այդ հրաշալի միասնության, որը մենք միշտ կարողանում ենք ապրել: Չէ՞ որ սա պատճառ է շնորհակալության, թե՞ կարծում եք՝ ոչ: Մենք շնորհակալ ենք Աստծուն, որ նա ուղարկեց իր Հոգին, մենք շնորհակալ ենք Աստծուն, որ նա մեզ է նվիրել Քրիստոսի եկեղեցին, հավատացյալների միասնությունը: Իսկ այսօր մենք ուզում ենք առանձնապես շնորհակալ լինել Սուրբ Հոգի Աստծուն:

Պողոսն այսպես է գրել. „ Եթե ապրում ենք Հոգով, ըստ Հոգու էլ ընթանանք„: Այլ լեզուներով այն ավելի հստակ է արտահայտված: Այնտեղ այսպես է գրված. „ Եթե ապրում ենք Սուրբ Հոգու միջոցով…„: Դա նշանակում է , որ մենք կարող ենք միայն Սուրբ Հոգու միջոցով ապրել: Նա է այն բանի հիմքը, որ մենք Աստծուց կյանք ունենք: Դրա համար մենք ուզում ենք միասին Սուրբ Հոգի Աստծուն շնորհակալություն ասել: Նրա միջոցով մենք ունենք աստվածային կյանք: Դա սկսվում է նրանով, որ Սուրբ Հոգին մեզ հայտնվում է, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Մարդկային մտածելակերպով, սովորելով կամ Աստվածաշունչ կարդալով ոչ ոք Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի չի գալիս: Դա կարող է միայն Սուրբ Հոգու միջոցով հայտնվել, որը մարդուն հնարավորություն է տալիս ճանաչել կարողանալ, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է: Դա Սուրբ Հոգու գործն է: Սուրբ Հոգու միջոցով մենք ունենք աստվածային կյանք: Վերստին ծնվելով Սուրբ ջրով և Հոգով Աստված այդ կյանքը մեր մեջ է դրել: Սա Սուրբ Հոգու գործն է: Դրա համար մենք շնորհակալ ենք: Սուրբ Հոգին մեզ նվիրում է նաև ամեն ինչ, ինչի կարիքը մենք ունենք, որպեսզի այդ կյանքը կարողանա զարգանալ: Նա նվիրում է մեզ սնունդ, որի կարիքը մենք ունենք, որպեսզի Հոգուց բխող կյանքը սնենք: Հիսուսն ասել է. „ Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից„ / Մատթ.4;4/, և նա վկայակոչում է. „ Երանի է նրանց, որ լսում են Աստծու խոսքը„ / Ղուկ. 11;28/: Դա նշանակում է , որ բավարար չէ Աստծո խոսքը միայն կարդալը, այն պետք է նաև լսել: Որպեսզի աստվածային կյանքը զարգանալ կարողանա, կարիք կա քարոզի: Դա եկեղեցու գյուտը չէ, դա աստվածային ճշմարտություն է: Դա Տեր Աստվան է այդպես որոշել. Երանի նրանց, ովքեր Աստծո խոսքն են լսում:

Սուրբ Հոգին մեզ ունակ է դարձնում ոգիները տարբերակելու:

Որպեսզի Աստվածաշնչում գրված Աստծո խոսքը հասկանանք, կարիք ունենք Սուրբ Հոգու: Աստվածաշունչը ոգեշնված է Սուրբ Հոգով և կարող է միայն Սուրբ Հոգու օգնությամբ մեկնաբանվել:

Շատ մարդիկ կան, ովքեր ուսանում են Սուրբ գիրքը: Սակայն, եթե Սուրբ Հոգին նրանց չի ոգեշնչում, նրանք չեն կարող Սուրբ գրքի իմաստը հասկանալ: Դա մարդկանց մոտ հնարավոր չէ: Դրա համար

անհրաժեշտ է Սուրբ Հոգու ներգործությունը: Ինչը որ Սուրբ Հոգին մեզ ոգեշնչում է, պետք է Սուրբ Հոգին էլ մեկնաբանի:

Սակայն դրանով չի վերջանում: Բավարար չէ Աստվածաշունչ կարդալը, պետք է լսել նաև Աստծու խոսքը, պետք է լսել քարոզը: Իսկ քարոզը պետք է ոգեշնչված լինի Սուրբ Հոգուց: Առաջներում մենք հաճախ խոսում էինք ,,հոգեպարար խոսքի,, մասին: Ես այն կարծիքին չեմ , որ յուրաքնչյուր բառ, որ քարոզվում է, աստվածային ճշմարտություն է: Դա ես գիտեմ իմ անձնական և թարմ փորձից:

Ի դեպ, ես պետք է Լյորախում մեր եղբայրներին և քույրերին ներողություն հայտնեմ. Չէ՞ որ ես Համբարձման ժամանակ ողջ ուժով և ոգևորությամբ եմ քարոզել, որ Մովսեսն ու Եղիան դեպի երկինք են համբարձվել: Դա, իհարկե, սխալ էր: Հենոխն ու Եղիան էին, որ երկինք էին համբարձվել: Մովսեսը պետք է մահանար: Աստված ինքն է նրա թաղել, նրա գերեզմանը այլևս չեն գտել: Սակայն, նա պետք է մահանար: Հենոխն ու Եղիան են համբարձվել երկինք, ոչ թե՝ Մովսեսն ու Եղիան: Ուրեմն, ոչ բոլոր խոսքերն են Աստծո խոսք, որը քարոզվում է զոհասեղանի մոտ:

Լավ, ինչպես է լինում Սուրբ Հոգու ոգեշնչումը: Սուրբ Հոգին առանձնահատուկ ուժ է տալիս քարոզվող խոսքին: Սուրբ Հոգու ներգործությունը տանում է նաև նրան, որ ունկնդիրը, ով հավատացյալ է, ճանաչում է քարոզից եկող այդ ուժը և ընդունում: Դա սուրբ Հոգու ազդեցությունն է, և դրա համար մենք շնորհակալ ենք:

Սուրբ Ընթրիքի տոնակատարության ժամանակ ներգործում է Սուրբ Հոգին, Հիսուսի մարմինն ու արյունը մտնում են հացի և գինու մեջ: Դրա համար էլ մենք կարողանում ենք տոնել Սուրբ Ընթրիքը և ընդունել այն ուժը, սնունդը, որի կարիքը մենք ունենք, որպեսզի կյանքը մեր մեջ զարգանալ կարողանա

Ես մի վերջին խոսք էլ եմ նշում Սուրբ Հոգու ազդեցության մասին: Հոգին սրբացնում է առաքյալներին և ձեռնադրում եղբայրներին, որ նրանք կարողանան կատարել իրենց ծառայությունը: Առանց դրա սրբացում տեղի չի ունենա: Ինչպե՞ս կարող են անկատար մարդիկ ինչ որ բան անել, որ սրբացնող ազդեցություն ունենա: Դա կարող է միայն սրբացված Աստծո սպասավորն անել, ում Սուրբ Հոգին սրբացրել է:

Սրանք մի քանի նկատառումներ էին այն մասին, թե ինչու ենք մենք ապրում Սուրբ Հոգու միջոցով, և թե ինչու համար մենք կարող ենք շնորհակալ լինել:

Գեղեցիկ է, երբ մենք գովաբանության և շնորհակալության երգեր ենք երգում: Յուրաքանչյուր մայր իր երեխային կասեր. ,, Գեղեցիկ է, որ դու ինձ շնորհակալ ես, սակայն ես մի քիչ ավելին կուզենայի,,:

Ինչպե՞ս կարող ենք մենք շնորհակալություն հայտնել Սուրբ Հոգուն, որ նա մեզ աստվածային կյանք է նվիրել, որ նա մեզ դրա համար սնունդ է նվիրել և որ նա հնարավոր է դարձրել, որ այդ կյանքը մեր մեջ զարգանա: Այնպես, որ մենք թույլ տանք կերակրվել Հոգուց: Նա մեզ համար սնունդ է պատրաստում քարոզվող խոսքով և Սուրբ Ընթրիքով: Նվազագույնը կլինի այն, որ մենք ձգտենք լսել քարոզվող խոսքը և

Ներկայացնելով ննջեցյալներին՝ առաքյալները ընդունում են Սուրբ Ընթրիքը

ընդունել ու ճաշակել Սուրբ Ընթրիքը: Ես հաճախ եմ ասել և կրկնում եմ ևս այստեղ. խոսքը ժամերգություն այցելելու մասին չէ, խոսքը մեր փրկության մասին է:

Հնարավոր չէ Աստծո հետ միասնություն կազմել, առանց քարոզվող խոսքը լսելու և ընդունելու և Սուրբ Ընթրիքը տոնելու: Դա ես չեմ հայտնագործել, դա աստվածային ճշմարտություն է, անկախ նրանից այն ըմռնվում է, թե՝ ոչ: Ես միայն Աստծո մի սպասավոր եմ և կարող եմ միայն այն քարոզել, ինչ Աստված ինձ ասում է: Իսկ նա ինձ ինչ ասում է, ասում է շատ հավատացյալների: Եկեք մեր շնորհակալությունը Սուրբ Հոգու հանդեպ նրանով ցույց տանք, որ մենք ընդունենք այն սնունդը, որը նա է մեզ համար պատրաստում:

Է՞լ ինչպես կարող ենք մեր շնորհակալությունը ցույց տալ: Նրանով, որ աղոթենք Սուրբ Հոգով: Դա ևս շատ կարևոր է: Հիսուսն աղոթել էր իր աշակերտների հետ: Ապա նա ուղարկել է Սուրբ Հոգին, ով օգնում է մեզ աղոթելիս: Սուրբ Հոգին աղոթում է մեզ հետ և մեզ ասում է, թե մենք ինչպես պետք է աղոթենք: Սուրբ գրքում այսպես է գրված. „ Դուք ստացաք որդեգրության հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր„ / Հռոմ. 8;15/: „ Աբբա„ արամերեն բառ է, որը շատ պարզ կոչվում է՝ „ հայր„; Սա Աստծո հանդեպ անսահմանափակ, լիակատար վստահություն է արտահայտում

Երբ մենք ասում ենք՝ սիրելի երկնային Հայր, Հայր, որ երկնքում ես…., ապա այդ արտահայտությունը նշանակում է, որ այն, ինչ մենք հիմա ասում ենք, լի է Աստծո հանդեպ կատարյալ վստահությամբ. ես գիտեմ, որ դու ինձ սիրում ես, ես գիտեմ, որ դու Ամենկալ ես, ես չեմ կարող քեզ հասկանալ, բայց ես լիովին վստահում եմ քեզ: Դա Սուրբ Հոգով ոգեշնչված աղոթքի արտահայտում է: Եկեք Հոգով աղոթենք:

Երբ մենք ասում ենք՝ սիրելի երկնային Հայր, Հայր, որ երկնքում ես…., ապա այդ արտահայտությունը նշանակում է, որ այն, ինչ մենք հիմա ասում ենք, լի է Աստծո հանդեպ կատարյալ վստահությամբ. ես գիտեմ, որ դու ինձ սիրում ես, ես գիտեմ, որ դու Ամենկալ ես, ես չեմ կարող քեզ հասկանալ, բայց ես լիովին վստահում եմ քեզ: Դա Սուրբ Հոգով ոգեշնչված աղոթքի արտահայտում է: Եկեք Հոգով աղոթենք:.

Եկեք նաև Հոգով պայքարենք: Մենք մկրտված ենք, կնքված ենք և դրանով մեր կամքն ենք արտահայտել Հիսուս Քրիստոսին հետևելու և չարը հաղթահարելու: Սուրբ Հոգին մեզ ունակ է դարձնում ոգիները տարբերակելու: Կարևոր է, որ մենք ճիշտ պայքար մղենք, ճիշտ թնամու դեմ պայքարենք:

Երբ մենք ասում ենք, որ ուզում ենք հաղթել աշխարհին, ապա կարող է տպավորություն առաջանալ, որ մենք մեզ լավ չենք զգում այս երկրի վրա. այստեղ ամեն ինչ վատն է, տգեղ, կեղտոտ և մենք ձգտում ենք երկինք, որտեղ ամեն ինչ հրաշալի է: Այդ դեպքում մենք սխալ պայքար տարած կլինենք: Ինչը երկրային է. միանգամայն վատ և չար չէ: Մենք չենք արհամարհում կյանքը երկրի վրա: Կան նաև գեղեցիկ, հաճելի, ցանկալի բաներ երկրի վրա: Հիսուսն էլ չէր արհամարհում երկրային կյանքը, նա ուներ ընկերներ և վայելում էր իր ընկերությունը, նա խմում էր, ուտում և տոնում, և կարողանում է այն իսկապես վայելել:

Ոչ, մենք չենք արհամարհում երկրային կյանքը: Մենք այն գնահատում ենք և կարողանում ենք այն վայելել: Պայքարը, որը մենք տանում ենք, այլ պայքար է: Մենք պայքարում ենք չարի դեմ: Այդ պայքարը կարող ենք մի նախադասության մեջ ամփոփել. մենք պայքարում ենք այն ամենի դեմ, ինչը դեմ է Աստծո և մերձավորի հանդեպ սիրո պատվիրանին: Դա է ճիշտ պայքարը: Սուրբ Հոգու միջոցով մենք միանում ենք Քրիստոսի մարմնին: Հիսուս Քրիստոսն իր մասին ասել է. „ Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու„ / Մատթ. 20;28/: Եթե մենք Սուրբ Հոգու միջոցով միավորվում ենք Քրիստոսի մարմնի հետ, ապա մեր առաջադրանքը նույնն է: Մենք Քրիստոսի մարմնի մասնիկը չենք դառնում, որպեսզի մեզ ծառայեն: Որոշ հավատացյալներ եկեղեցին դիտարկում են որպես ծառայության կենտրոն: Եթե ինչ -որ բանի կարիք են ունենում, ապա հիշեցնում են. ես էլ եմ անդամ, ես տվել եմ իմ զոհաբերությունը, դա ինձ համար շատ է…. Ես չեմ ուզում դա շարունակ ներկայացնել:

Մենք պետք է ծառայենք և բարին անենք: Ինչու՞: Մի պատճառով. մենք պետք է վկայենք Հիսուս Քրիստոսին: Ես ծառայում եմ, որովհետև Հիսուսն էլ էր

Առաքյալ Յուրգ Յրինդեն

Շրջանային առաքյալ Վիլֆրիդ Քլինգլեր

Առաքյալ Ֆոլքեր Քյունլե

դա անում և ես ուզում եմ նմանվել նրան: Ինչու՞ ես դու դա անում: Քանի որ Հիսուսը սիրում է ինձ և ես ուզում եմ առարկել այդ սիրուն: Բոլոր գործերում, որ մենք անում ենք, պետք է ծառայենք, որ Հիսուս Քրիստոսին վկայենք: Դա վերաբերվում է յուրաքանչյուրին, մենք էլ ենք մասնիկը հավատացյալների միաբանության: Նաև Քրիստոսի եկեղեցին է կոչված ծառայելու Քրիստոսին:

Մեր ծառայությունը վկայությունն է այն բանի, որ որ Հիսուս Քրիստոսը ղեկավարում է իր եկեղեցին, որ նա ներկա է համայնքում և ներգործում է այնտեղ: Մեր միասնությամբ մենք ցույց ենք տալիս, որ Հիսուս Քրիստոսը իր եկեղեցում, համայնքում ներկա է և գործում է: Եղբայրներ և քույրեր, եղեք բարի և ընդունեք այս մտքերը: Մեր միասնության որակը և եռանդունությունը ապացույցն ու վկայությունն են այն բանի, որ Հիսուս Քրիստոսը ներկա է համայնքում և գործում է:

Մի վերջին կետ. մենք ուզում ենք Հոգով աճել: Մենք դարձել ենք Աստծո զավակներ, որ Տիրոջ օրը ներկա լինենք, որպեսզի Տիրոջ հետ որպես նրա հարս իր թագավորությունը գնանք:

Հաճախ ենք լսում կշտամբանքներ, մենք մտածում ենք եսասերի նման: դուք ուզում եք փրկվել, իսկ թե ինչ կպատահի մյուս մարդկանց հետ, ձեզ համար միևնույնն է: Դա կարելի է այդպես տեսնել: Սակայն ես կցանկանայի երևույթները Հոգու լույսի ներքո լուսաբանել: Ո՞րն է Աստծո փրկության պլանի նպատակը; Աստված ուզում է ոչ միայն ինձ փրկել, նա ուզում է ոչ միայն քեզ փրկել, նա ուզում է բոլոր ժամանակների բոլոր մարդկանց չարից փրկել, նրանց տառապանքից ու մահից ազատել: Նպատակը նոր արարչագործությունն է, որտեղ մահն այլևս չի լինի: Դա փրկության պլանն է: Այդ պլանի երկրորդ քայլը Հիսուս Քրիստոսի գալուստն է: Հիսուսը նորից է գալու և իր հետ տանելու իր հարսին: Դա պատկանում է թագավորական քահանայությանը, որը գործելու է հազարամյա խաղաղության թագավորությունում՝ Քրիստոսի կողքին: Դա մեր հավատն է: Եվ դրանից եմ ես անում իմ եզրակացությունը:

Իհարկե, մենք ուզում ենք օգնել մարդկանց, նրանց կարիքները մեղմացնել: Բայց, ամենալավ ճանապարհը նրանց լիովին բոլոր կարիքներից ազատելու, ամենալավ ծառայությունը, որը ես կարող եմ անել մարդկության համար, այն է, որ ես նախապատրաստվեմ Տիրոջ գալստյանը, որպեսզի կարողանամ փրկության պլանի իրականացմանը համագործակցել:

Աստված ուզում է բոլոր մարդկանց օգնել: Նրա նպատակը մահից փրկելն է նոր արարչագործությամբ: Իր պլանի հաջորդ քայլը Քրիստոսի գալուստն է: Եկեք աճենք Հոգով, որպեսզի մենք պատրաստ լինենք, երբ Տերը գա: Դա ծառայում է ոչ միայն մեզ, դա ծառայություն է նաև մարդկությանը: Այսպես, մենք ուզում ենք Սուրբ Հոգի Աստծուն այսօր շնորհակալություն ասել նրա ներգործության համար, կյանքի համար, որը նա է տվել մեզ, սնունդի համար, որը տվել է մեզ, պաշտպանության համար, որը նվիրում է մեզ:

Հիմնական մտքեր

Սուրբ Հոգու շնորհիվ մենք միասնություն ենք կազմում Աստծո հետ: Մենք շնորհակալ ենք նրանով, որ մենք

- ձգտում ենք հոգևոր սննդի,
- Հոգով ենք աղոթում,
- Քրիստոսի օրինակին ենք հետևում,
- Սիրում ենք մեր մերձավորին և
- Պատրաստվում ենք Քրիստոսի գալստյանը:

Նորություն Հայաստանից

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Կաճաճկուտի համայնքը ողջույններ է ուղարկում Գերմանիայի եղբայրներին ու քույրերին

Այց Հայաստան

2016 թվականի հունիսի 30-ից հուլիսի 5-ը տեղի ունեցավ առաքյալ Վիլհելմ Հոյերի հերթական այցը Հայաստան: Այս տարվա ընթացքում սա առաքյալի առաջին այցն էր և առանձնանում էր նրանով, որ նրան ուղեկցում էր Գերմանիայի Դորթմունդ քաղաքում գտնվող Նորառաքելական եկեղեցու վարչության աշխատակից և շրջանային ավագ Ռալֆ Էրմիշը: Ինչպես առաքյալ Վիլհելմ Հոյերի բոլոր այցերը, այս այցը ևս շատ հագեցած էր, որովետև ժամերգություններից բացի, ընդգրկում էր նաև հանդիպումներ և սեմինարներ եկեղեցական, համայնքային և հավատքային հարցերի շուրջ: Մեկ օր մայրաքաղաք Երևանում մնալուց հետո նրանք ուղևորվեցին դեպի Լոռու տարածաշրջան, որտեղ գտնվում են Նորառաքելական եկեղեցու հինգ համայնքները: Տարածաշրջան այցի հենց առաջին օրը ժամերգություն անցկացվեց Կաճաճկուտի համայնքում: Առաքյալը գոհ էր համայնքի անդամների մասնակցությունից և Սուրբ Ընթրիքի պատշաճ տոնակատարությունից: Նա նշեց, որ առանձնակի ուրախությամբ է այցելում Կաճաճկուտի համայնք, որը թվով ամենամեծն է և հաստատուն է մնում իր հավատի մեջ:

Նույն օրը երեկոյան, արդեն Վանաձորում, տեղի ունեցավ ,,Եղբայրական ժամ,, կոչվող հավաքույթը, որին մասնակցում էին բոլոր համայնքների սպասավոր եղբայրները, կիրակնօրյա դպրոցի ուսուցչական անձնակազմը, եկեղեցու այլ ակտիվիստներ՝ թվով շուրջ 26 հոգի: Եղբայրական ժամի հիմնական մոտիվացիան ,, Հաղթություն Քրիստոսով,, նշանաբանն էր, որի շրջանակում էլ կատարվում էին հոգևոր մտքերի մեկնաբանությունները: Ինտերակտիվ հարցերով ու պատասխաններով քննարկվեցին Հավատքի 4-րդ և 5-րդ դրույթները՝ անմիջական առաքյալ Վիլհելմ Հոյերի մասնակցությամբ, իսկ 7-րդ դրույթը՝ Գերմանիայում շրջանային ավագ Ռալֆ Էրմիշի մասնակցությամբ: Ակտիվ քննարկումից հետո առաքյալը, եպիսկոպոսը և ծառայող մյուս եղբայրները պատասխանեցին Հավատքի դրույթների վերաբերյալ մասնակիցներին հետաքրքրող հարցերին: Այնուհետև առաքյալը պարզաբանումներ ներկայացրեց անդրշիրիմյան աշխարհում ննջեցյալների վիճակի վերաբերյալ՝ շեշտելով, որ երկրի վրա ապրող հավատացյալներն իրենց աղոթքներով և բարեխոսություններով կարող են օգնել ննջեցյալ հոգիներին՝ ազատվելու մեղքի բեռից և հանգստություն գտնելու: Այսինքն, հավատքային կյանքով ճիշտ ապրելով ու գործելով՝ հավատացյալները կարող են փոխել ննջեցյալների վիճակը անդրշիրիմյան աշխարհում՝ հօգուտ նրանց: Հստակեցվեց, որ Աստված ներկա է ոչ միայն ողջերի, այլ նաև՝ ննջեցյալների համար, որ նա ուզում է օգնել բոլորին: Եղբայրական ժամի

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Կաճաճկուտի համայնքի ամենափոքրիկ անդամը առաքյալ Վիլհելմ Հոյերի գրկում է

ընթացքում քննարկվեցին նաև ժամերգությունների ընթացքին վերաբերող կազմակերպական հարցեր:

Հաջորդ օրը ժամերգություններ անցկացվեցին Ալավերդի և Օձուն համայնքներում: Երկու համայնքներում էլ ոգևորությամբ էին լսում ոչ միայն առաքյալին, այլ նաև Գերմանիայից ժամանած սպասավոր եղբորը, ով մեջբերումներ անելով Աստվածաշնչից, ավելի էր ամրապնդում ունկնդիրների հավատը Սուրբ Երրորդություն Աստծո հանդեպ:

Մեծ էր հուլիսի 3-ի կիրակի օրվա խորհուրդը, քանի որ այդ օրը ժամերգություն անցկացվեց ննջեցյալների համար: Նորառաքելական եկեղեցին տարվա մեջ երեք անգամ՝ մարտ, հուլիս և նոյեմբեր

Սպասավոր եղբայրներն ու կիրակնօրյա դպրոցի ուսուցիչները սեմինարի ընդմիջմանը

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

ամիսների առաջին կիրակի օրերին, անց է կացնում հատուկ ժամերգություններ ննջեցյալների համար: Առաքյալ Հոյերը շեշտեց, որ իր համար առանձնահատուկ ուրախություն է, որ այս տարվա հուլիս ամսվա ննջեցյալների ժամերգությունը անց է կացնում Հայաստանում, Ստեփանավանի և Վանաձորի համանքների եղբայրների ու քույրերի մասնակցությամբ: Առաքյալը չզլացավ մեկ անգամ ևս պարզաբանելու ննջեցյալների համար անցկացվող ժամերգությունների նշանակությունը, ընթացքը, Սուրբ Ընթրիքը ննջեցյալներին ևս նվիրաբերելու խորհուրդը, և ընդհանրապես, ննջեցյալներին եկեղեցական խորհուրդներին հաղորդակից դարձնելու հնարավորությունը: Նշված համայնքներում ժամերգություններն անցկացան բարձր մակարդակով, զոհասեղանին մոտեցած սպասավոր երկու եղբայրներն ընդունեցին ննջեցյալների համար նվիրաբերվող նշխարը, որն ավելի ընդգծեց պահի խորհուրդը:

Երկուշաբթի առավոտյան առաքյալն ու շրջանային ավագը ուղևորվեցին դեպի Սևան: Այնտեղ նրանք նախ այցելեցին երիտասարդների հանգստի համար կառուցված կացարանը, որը գտնվում է Շորժայի ափամերձ տարածքում, ուսումնասիրեցին կառույցի վիճակը, քննարկեցին արտաքին և ներքին վերանորոգման խնդիրները, շարքից դուրս եկած գույքը նորով փոխարինելու հարցերը, ձեռք բերված գույքի երկարաժամկետ պահպանմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները: Կացարանի հսկիչ պատասխանատուն ցույց տվեց նաև երիտասարդների համար ընտրված լողափը, լողի անվտանգ գոտու ապահովման և ջրի մակընթացությունից տուժած լողափի վերակնգնման աշխատանքների արդյունքը: Արդեն մի քանի մեքենա խճաքար էր կրվել և լողափի տարածքը հարթեցվել, աշխատանքները

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Ալավերդու կիրակնօրյա դպրոցի ձեռքի աշխատանքի խմբակի երեխաները իրենց ասեղնագործ աշխատանքը նվիրում են նորառաքելական եկեղեցու վարչությանը

պետք է շարունակվեին, որպեսզի բոլոր փոսերը վերացվեին: Նա հավաստիացրեց, որ եպիսկոպոս Ռաֆայել Մովսիսյանի անմիջական օժանդակությամբ և շրջանային ավետարանիչ Արտյոմ Փիլոյանի աջակցությամբ ամեն ինչ արվում է երիտասարդների ակտիվ հանգստի համար:

Դեպի Սևան քաղաք տանող ճանապարհը ձգվում էր լճի երկայնքով: Առաքյալ Վիլհելմ Հոյերն ու շրջանային ավագ Ռալֆ Էրմիշը ողջ ճանապարհի ընթացքում վայելում էին կապույտ Սևանի գեղեցկությունը: Ամառվա տապին լճի զովությունն ավելի էր առույգացնում Աստծո սպասավորներին, և նրանք անմիջապես նախապատրաստվում էին Սևանի համայնքում կայանալիք ժամերգությանը: Այստեղ ևս ժամերգությունն անց է կացվում իր բնականոն հունով և նոր ուժ ու հավատ ներշնչում հավատացյալ եղբայրներին ու քույրերին: Ինչպես բոլոր համայնքներում, այնպես էլ

այստեղ, առաքյալը հիշեցնում է շրջանային առաքյալի կողմից հոկտեմբեր ամսին անցկացվող ժամերգությունների մասին և բոլորին սիրով հրավիրում այդ ժամերգությանը:

Առաքյալ Հոյերը գոհ էր պլանավորած այցի հաջող ընթացքից: Նա և իր ուղեկից շրջանային ավագ Ռալֆ Էրմիշը մեծ տպավորություններով վերադարձան Գերմանիա:



Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

2016 թվականին Հայաստան կատարած իր առաջին այցի ընթացքում առաքյալ Վիլհելմ Հոյերը իրեն ուղեկցող շրջանային ավագ ու ՆԱԵ-ի վարչության աշխատակից / Գերմանիա/ Ռալֆ Էրմիշի հետ եղավ գրեթե բոլոր համայնքներում և Սևանում գտնվող երիտասարդների հանգստյան գոտում

Դավիթն ու Աբիգեան

/ 1. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25/

Դավիթն իր մարդկանց հետ պաշտպանում էր Նաբաղի ոչխար խուզողներին և Նաբաղի ոչխարներին: Նաբաղը անշնորհակալ եղավ նրանց հանդեպ: Ճարպիկ արարքով Նաբաղի կին Աբիգեան խոչընդոտեց Դավթին՝ վրեժ լուծել Նաբաղից:

Մառնի անապատում էր ապրում Նաբաղը: Նա շատ հարուստ մարդ էր: Նա ուներ 3000 ոչխար և 1000 այծ: Նաբաղն ամուսնացած էր Աբիգեայի հետ: Նա գեղեցիկ և խելացի էր, իսկ Նաբաղն ընդհակառակը՝ կոպիտ ու չար: Դավիթը լսում է, որ Նաբաղը Կարմեղոսում իր ոչխարներն է խուզում: Նա իր մարդկանցից տասին ուղարկում է: Նրանք պետք է Կարմեղոս գնային, Նաբաղին բարեկամաբար ողջունեին և ուտելու ու խմելու ինչ որ բան խնդրեին: Սակայն Նաբաղը հարցնում է Դավթի ծառաներին. ,, Ո՞վ է Դավիթը: Այս օրերին բազմացել են իրենց տերերից փախած թափառական ծառաները: Ուրեմն առնեմ իմ հացը, գինին և խուզողների համար մորթված անասուններս ու տամ այս մարդկանց, որոնց որտեղից լինելը չգիտեմ,,: Դավթի մարդիկ վերադառնում են և ամեն ինչ պատմում նրան: Դավիթն ասում է իր մարդկանց. ,,Ամեն մեկը իր սուրը թող կապի մեջքին,,: Եվ յուրաքանչյուրը կապում է իր սուրը և Դավիթն էլ է վերցնում իր սուրը: Մոտ 400 մարդ գնում են նրա հետ, մնացած 200-ը մնում են կահ-կարասու մոտ: Մի մարդ եկավ Աբիգեայի մոտ և պատմեց նրան, թե ինչ է պատահել. ,, Դավիթն անապատից պատգամավորներ է ուղարկել մեր տիրոջը ողջունելու, իսկ նա նրանցից երես է դարձրել: Այդ մարդիկ մեր նկատմամբ շատ բարյացակամ էին, որքան նրանց հետ բաց դաշտում էինք, մեզ փսաս չէին տվել, և մեզանից ոչ մի բան չի պակասել: Ինչքան նրանց հետ էինք, և արածեցնում էինք ոչխարները, նրանք մեզ համար պարիսպ եղան գիշեր ու ցերեկ: Արդ, տես ու իմացիր, թե ինչ ես անելու, քանզի մեր տիրոջ ու նրա ամբողջ տան վրա չարիք է հասել,

Աստվածաշնչյան ժամանակներում արյան մեղքը պարտք էր, որ կուտակվում էր, երբ մարդու արյուն էր թափվում, մարդ էին սպանում: Սպանվածի հարազատներն ու տոհմակիցները պետք է վրեժ լուծեին այդ մահվան համար, ու նրանք նույնպես սպանում էին մարդասպանին:

նա այնպիսի դաժան մարդ է, որ նրա հետ խոսել չի լինի,,:
Աբիգեան շտապում է: Նա վերցնում է 200 հաց և երկու տիկ գինի հինգ եփած ոչխար և հինգ արդու բոված ցորեն, մեկ զամբյուղ չամիչ, երկու հարյուր շարոց չոր թուզ: Իր ամուսնուն նա այդ մասին չի ասում:
Ուտելիքը բարձում է ավանակի վրա և և քշում դեպի Դավիթն ու նրա մարդկանց ընդառաջ:
Դավիթը մտածում էր. Ես իզուր եմ պահել այն ամենը, ինչ Նաբաղն ուներ անապատում: Ոչ մի ոչխար չի պակասել, իսկ Նաբաղն իմ բարությունը հատուցում է չարությամբ: Աստված պետք է նրան դատի:
Երբ Աբիգեան Դավթի մոտ եկավ, իջավ ավանակի վրայից և ծնկի եկավ նրա առաջ: Նա ասաց. ,, Արդ կենդանի է Տերը, և կենդանի ես դու: Տերն է քեզ արգելել անարատ արյուն թափելը և այդ բանից քո ձեռքը հեռու է պահել: Հիմա ընդունիր այս ընծան, որ քո աղախինն իր տիրոջն է բերում, այն տուր իմ տիրոջ հետ գտնվող ծառաներին: ներիր քո աղախնի հանցանքը: Քո մեջ երբեք չարություն թող չլինի: Դու չպետք է զուր արդար արյուն թափես: Տերը թող բարին անի իմ տիրոջը, որ հիշես քո աղախնին,,:
Դավիթը պատասխանում է Աբիգեային. ,, Օրհնյալ է Իսրայելի Տեր Աստվածը, որ քեզ այսօր ինձ ընդառաջ ուղարկեց: Օրհնյալ լինի քո խոհեմությունը և օրհնյալ լինես դու, որ արգելք հանդիսացար ինձ այսօր, և ես չգնացի արյուն թափելու,,:
Դավիթն ընդունում է ուտելիքը, որը Աբիգեան էր բերել: Նա ասում է նրան. ,, Գնա քո տունը խաղաղությամբ,,:
Բայց երբ Աբիգեան տուն եկավ՝ Նաբաղի մոտ, Նաբաղը մեծ խնջույք կազմակերպեց և հարբեց: Կինը նրան չասաց, թե ինչ է արել: Հաջորդ առավոտյան, երբ Նաբաղը կրկին սթափվել էր, Աբիգեան նրան պատմեց իր հաշտության արարքի մասին: Նաբաղը կարծես քար կտրեց, նրա սիրտը մեռավ:
Տաս օր հետո Նաբաղը մահացավ: Դավիթը գիտեր, որ Աստված նրանից վրեժ լուծեց: Եվ Աստված Աբիգեայի միջոցով խոչընդոտեց Դավթին՝ մեղավոր դառնալ: Դավիթը հարցրեց Աբիգեային, թե նա չի ուզենա դառնալ իր կինը: Եվ Աբիգեան դարձավ Դավթի կինը:



Միրելլա Ֆորթունատո

ԼԻՀԻ ՄՈՏ՝ ՆՅՈՒ ՋԵՐՍԻՈՒՄ / ԱՄՆ/

Լուսանկարը՝ անձնական

Ողջույն, իմ անունը Լիհի է: Ես ութ տարեկան եմ և ապրում եմ Նյու Ջերսիում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ես ունեմ մեկ վեցամյա եղբայր: Նրա անունն է Միքայել:

Իմ հայր Ջոնը աշխատում է որպես ծրագրի մենեջեր բժշկական սարքավորումների ձեռնարկություններից մեկում, իսկ իմ մայր Ռաքելը ճառագայթաբանության ասիստենտ է:

1

Այն վայրից, որտեղ ես եմ ապրում, մոտ 30 րոպեում մեքենայով հասնում են Նյու Յորք քաղաքը: Փարամուսի եկեղեցում իմ հայրը քարոզիչ է: Այնտեղ տանող ճանապարհին ես կարող եմ տեսնել բարձրահարկ շենքերի ուրվագիծը, նաև պետական կառույցների ոճը:

Լուսանկարը՝ Օլգայանը

Եկեղեցում իմ ամենալավ ընկերուհին Աննան է: Մենք միասին հաճախում ենք կիրակնօրյա դպրոց: Մեր ուսուցչուհի Անդրեայի հետ պարապմունքները հաճելի են: Հատկապես ուրախանում եմ արձակուրդների ընթացքում Աստվածաշնչի ամառային դպրոցի համար: Այդտեղ են գալիս նոր երեխաներ այլ համայնքներից: Մենք տարբեր բաներով ենք զբաղվում. երգում ու խաղում ենք, և այդ ընթացքում որոշ բան ենք սովորում Աստծո գործի մասին:



2

Միքայելը և ես գնում ենք նույն դպրոցը: Նա հաճախում է նախակրթարան, իսկ ես՝ երրորդ դասարան: Իմ սիրած առարկաներն են մաթեմատիկան և ընթերցանությունը:



Երաժշտությունն էլ եմ սիրում, հաճույքով երգում եմ

Դասամիջոցներին խաղում եմ իմ ընկերների հետ: Իմ լավագույն ընկերուհին Լինդսեյն է, մենք իրար հետ շատ ժամանակ ենք անցկացնում:

Եթե ես դպրոցում կամ եկեղեցում չեմ լինում, սիրում եմ պարել և նկարել: Մայրիկն անգամ իմ նկարներից մի քանիսը շրջանակների մեջ է դրել: Սա դրանցից մեկն է:

Երկրի այս մասում բարձր լեռներ կան, սակայն արևելյան մասում՝ Ատլանտյան օվկիանոսի երկարությամբ կան երկար լողափեր:



Ձմռանը սիրում եմ սահել և դահուկ վարել, իսկ ամռանը՝ լողալ և լողափ գնալ:

Նյու Ջերսին կոչվում է այգիների պետություն, քանի որ այնտեղ շատ գյուղատնտեսական ձեռնարկություններ կան:

Դասավորիր Լիիի սիրած կերակուրները՝ ըստ երկների

- Ամերիկա
- Չինաստան
- Գերմանիա
- Ֆրանսիա
- Մեքսիկա



Այնտեղ աճեցվում են մրգեր և բանջարեղեն, օրինակ, լոլիկներ, հատապտուղներ և եգիպտացորեն: Աշնանը ես արդեն մի անգամ մասնակցել եմ խնձորի բերքահավաքին:
Միացյալ Նահանգները տարբեր մշակույթների հարազատ տուն է: Դրա համար էլ սննդի հարցում ես մեծ ընտրություն ունեմ: Իմ սիրած ուտեստներից են բուրիթոսը, տապակած երշիկը, Լո- Մայն-վերմիշելը, ֆրանսիական բոված հացը և Հոթ դոգը: Ամենալավ Հոթ դոգերը առաջարկվում են Նյու Յորք քաղաքի փողոցային վաճառողները: Իմ ծննդյան օրը հայրս ինձ մեկը նվիրեց:

Լուսանկարները՝ 1. Էմիլիասոս – Մեքսիկա 2. Լո – Մայն-վերմիշել – Չինաստան , 3. Տաքսիկոշ երշիկ – Գերմանիա, 4. Ֆրանսիական բոված հաց – Ֆրանսիա, 5. Հոթ դոգ - Միացյալ Նահանգներ

Լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի

Ժամերգություն և օրհնանքի արարողություններ

2015-ի սեպտեմբերին լույս տեսավ Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերում և պատասխաններում գիրքը: 750 հարցերից և պատասխաններից community -ին ընտրողաբար ներկայացնում է մի քանի հարցեր ու պատասխաններ: Այս հրատարակության մեջ խոսքը վերաբերում է ժամերգությանը, օրհնանքի արարողություններին և մեղքերի թողությանը:

Ի՞նչ է ժամերգությունը:
Ժամերգությունը Աստծո գործունեությունն է մարդկանց համար, միաժամանակ, մարդու գործունեությունը՝ Աստծո համար: Ժամերգությանը մարդիկ հավաքվում են, որպեսզի միասին ծառայեն Աստծուն, գովաբանեն նրան և շնորհակալություն հայտնեն: Նրանք նաև հավաքվում են, որպեսզի Աստծո խոսքը լսեն և խորհուրդներն ընդունեն: Ուրեմն՝ ժամերգությունը Աստծո և մարդու հանդիպումն է: Ժամերգության ժամանակ համայնքն ընդունում է Երրորդություն Աստծո ներկայությունը և զգում է, որ Աստված իրեն սիրով է ծառայում:

Աստված ներկա՞ է ժամերգությանը:
Այո, ժամերգության սկզբում Աստծուն կանչում են հետևյալ խոսքերով. „ Հանուն Աստծու՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու„: Աստծուն կանչելու այս ձևը բնորոշվում է որպես „ Երրորդության մուտքի բանաձև „: Այսպես, ժամերգություն այցելողին պարզաբանվում է, որ Աստված ներկա է, ինչպես խոստացել էր Աստծո Որդին / Մատթեոս 18;20/:

Որո՞նք են ժամերգության հիմական բաղադրիչները:
Երուսաղեմի առաջին քրիստոնյաների կողմից վկայվում է. „ Եվ նրանք հարատևում էին առաքյալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման ու աղոթքների մեջ„ / Գործք 2;42/: Այստեղից էլ ձևավորվել են ժամերգության հիմական բաղադրիչները՝ առաքյալների ուսմունքը, հաղորդությունը, հացի բեկումը և աղոթքը:

Ո՞րն է քարոզի հիմական բովանդակությունն ու նպատակը:
Քարոզի հիմական բովանդակությունը Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, ուրախ լուրն այն մասին, որ Հիսուսը զոհաբերվել, հարություն է առել և նորից գալու է: Սուրբ Հոգին խոսում է ծառայող եղբայրների միջոցով: Այսպես, հավատն արթնացվում և ուժեղացվում է: Խոսքի տեղեկացման նպատակը համայնքը Հիսուս Քրիստոսի գալստյանը նախապատրաստելն է / հմտ. 2. Կորնթացիներին 11;2/:

Ի՞նչ առաջադրանքներ ունեն քարոզը լսողները:
Քարոզից առաջ լսողները պետք է աղոթեն, որ Տերն

իրենց խոսքից բխող ուժեղացում և խաղաղություն նվիրի: Նրանք պետք է խոսքը հավատով ընդունեն և առաջադրանք ունենան այն առօրյայում՝ մտքով, խոսքով և գործով իրականացնել: Այսինքն՝ նրանց կոչ է արվում կյանքը վարել Քրիստոսին հետևելով:

Ո՞ր աղոթքն է ժամերգության ժամանակ հաստատուն տեքստով աղոթվում:
Աղոթքը, որը սովորեցրել է Հիսուսը, ,,Հայր մերն,, է: Դա միակ աղոթքն է, որ հավատացյալները ժամերգության ժամանակ միասին հաստատուն տեքստով են աղոթում: Սա ավանդվել է մի տարբերակում՝ հինգ խնդրանքով / հմտ. Ղուկաս 11;2-4/, իսկ ավելի մանրամասն տարբերակում՝ յոթ խնդրանքով / հմտ. Մատթեոս 6;9-13/:

Ի՞նչ խոսքերով է տեղեկացվում մեղքերի քավությունը:
Առաքյալները տեղեկացնում են մեղքերի թողությունն անմիջականորեն վկայակոչելով Հիսուս Քրիստոսին. ,, Ես ձեզ տեղեկացնում եմ ուրախ լուրը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծու Որդու անունով, ձեր բոլորիդ մեղքերն է ներված: Հարություն առածի խաղաղությունը թող լինի ձեզ հետ: Ամեն,,: Քարոզչական ծառայություն մատուցող եղբայրները մեղքերի քավությունը տեղեկացնում են՝ վկայակոչելով առաքյալներին. ,, Ինձ ուղարկող առաքյալի առաջադրանքով՝ հայտնում եմ ձեզ ուրախ լուրը՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու անունով ձեր բոլորիդ մեղքերն է ներված: Հարություն առածի խաղաղությունը թող լինի ձեզ հետ: Ամեն,,:

Որո՞նք են օրհնանքի արարողությունները:
Աստված մարդկանց իր օրհնանքով ուղեկցում է կյանքի տարբեր իրավիճակներում: ,, Օրհնանքի արարողությունների,, ներքո հասկանում ենք այն արարողությունները, որոնք արվում են որոշակի առիթներով: Օրհնանքի արարողությունները խորհուրդներ չեն:

Ի՞նչ է տեղի ունենում օրհնանքի արարողության ժամանակ:
Օրհնանքի արարողության ժամանակ Աստված դառնում է դեպի մարդը, ով նրան խնդրում է օրհնելու համար: Առաքյալի կամ քարոզչական պաշտոն կատարողների միջոցով Աստված օրհնում է այն խնդրողներին և նրանց առաջարկում է օգնություն, ողորմածություն և գթասրտություն: Նաև եկեղեցու շենքի կամ համայնքի հավաքատեղիի օծման ժամանակ է տեղի ունենում օրհնանքի արարողություն:

Օրհնանքի ի՞նչ արարողություններ են տեղի ունեում ժամերգության ժամանակ:
Ժամերգության ժամանակ տեղի են ունեում օրհնանքի հետևյալ արարողությունները՝ կոնֆիրմացիայի, նորառաքելական եկեղեցու կողմից ընդունվելու, նշանադրության օրհնանքի, ամուսնական օրհնանքի և հարսանեկան հոբելյանների օրհնանքի նիրաբերման: Ձեռնադրություններն ու հոգևոր պաշտոնին վերաբերող այլ արարողությունները ևս կատարվում են ժամերգությունների ժամանակ:

Ո՞րն է երաժշտության դերը ժամերգության ժամանակ:
Ժամերգության ժամանակ երաժշտության միջոցով գովաբանվում ու փառաբանվում է Աստվածը / հմտ. Սաղմոս 150/: Այսինքն՝ այն ունի ծառայող դերակատարություն: Այն կարող է ազդել ներաշխարհի վրա, համայնքին տրամադրել խոսքի տեղեկացմանը և ընդգծել Աստծո խոսքը: Համայնքի և երգչախմբի երգով կամ երաժշտական գործիքների նվագակցությամբ հաղորդվում է արիություն, զորություն և վստահություն: Տխրության և ճնշվածության ժամանակ երաժշտությունը կարող է մխիթարություն տալ: Երաժշտությունն ու աղոթքը ժամերգությունից առաջ ծառայում են ժամերգության այցելուների ներքին հավաքվածությանը և նախապատրաստում խոսքի տեղեկացմանը: Համայնքի երգեցողությամբ ներկաները ակտիվորեն ընդգրկվում են ժամերգության արարողություններում: Սուրբ Ընթրիքի տոնակատարությունից առաջ համայնքը կարող է երգով իր ապաշխարական տրամադրվածությունը վկայակոչել: Սուրբ Ընթրիքի տոնակատարության ժամանակ երգվող երգը արտահայտում է Աստծո հանդեպ սերն ու շնորհակալությունը:

Ինչպե՞ս է ավարտվում ժամերգությունը:
Ժամերգության ավարտին բոլոր ներկաներին նվիրաբերվում է Երրորդություն Աստծո օրհնանքը: Երրորդություն Աստծո անունով ընդունված ձևակերպումներով կազմվում է ավարտական աղոթքը, որն էլ ամփոփում է ժամերգության ընթացքը: Դրանով վստահեցվում է, որ ամեն ինչ, որ տեղի է ունեցել ժամերգության ժամանակ, գալիս է Սուրբ Երրորդություն Աստծուց:

Ինչպե՞ս է հնչում ավարտական օրհնանքը:
Ավարտական օրհնանքը համայնքին հաղորդվում է 2. Կորնթացիներին 13;13- ում գրված խոսքերով. ,, Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն,,:

Խմբագիր
Հրատարակիչ՝ Ժան- Լյուք Շնայդեր, Իուբերլանդսսթրասե 233 -8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդր Բիշոֆֆ հրատարակչություն ՓԲԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 23, 63263 Նոյ- Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ



Լուսանկարը՝ Մարիոյսի Շմիտի

Մեղքերի թողություն

Ի՞նչ պետք է մարդն անի, որ հասնի մեղքերի թողության

Մեղքերի թողության հասնելու համար անհրաժեշտ է՝

- Մարդը պետք է հավատա Հիսուս Քրիստոսին՝ որպես իր Փրկչի / հմտ. Հովհաննես 8,24/:
- Դրանից բացի, պետք է հավատալ, որ մեղքերի թողությունը կատարվում է առաքյալների միջոցով:
- Անհրաժեշտ է նաև այն տեսակետը, որ մարդը մեղավոր է և պարտք է կուտակում իր վրա և դրանից ելնելով էլ կարիք ունի ողորմածության:
- Պետք է սրտում ցանկություն լինի Աստծո հետ հաշտվողականության:
- Մեղավորը պետք է զղջա իր մեղքերի համար և Աստծո առաջ Հայր մեր աղոթքով խոստովանի. ,, Ներիր մեզ, մեր մեղքերը…,,:
- Պետք է առաջին հերթին հաղթահարել բոլոր թուլություններն ու սխալները:
- Մեղավորը պետք է ուզենա հաշտվել նրա հետ, ով գործել է իր դեմ և մեղավոր է իր հանդեպ:

Ո՞ր բովանդակությամբ է աղոթվում Հայր մերը ժամերգության ժամանակ:

Ժամերգության ժամանակ Հայր մերը աղոթվում է Մատթեոսի Ավետարանի բովանդակության համաձայն՝ ,, Հայր մեր, որ երկնքում ես,Սուրբ լինի անունը Քո,Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես երկնքում է: Տուր մեզ մեր ամենօրյա հացը,Եվ ներիր մեզ մեր բոլոր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեզ պարտք եղողներին, Եվ մի տանիր մեզ փորձության, այլ փրկիր մեզ չարից,Քանի որ Քոնն է թագավորությունը, և զորությունը և փառքը հավիտյանց հավիտենից: Ամեն,,:

Ի՞նչ է նշանակում ,, Հայր մեր ,, արտահայտությունը:

,,Հայր մեր ,, արտահայտությունը ցույց է տալիս, որ այս աղոթքը համայնքային աղոթք է: Եթե մարդիկ Աստծուն Հայր են անվանում, արտահայտումն է այն բանի, որ նա է իրենց ստեղծել, իրենց Տերն է և հոգում է իրենց համար: Նրանք իրավունք ունեն Աստծուն՝ առանց վախի, սիրով ու վստահությամբ ,, Հայր,, անվանել:

Ի՞նչ է նշանակում ,,…երկնքում,,:

,,….երկնքում,, բառը շեշտում է, որ Աստված ավելի մեծ ու բարձր է, քան՝ երկրային ամեն ինչը: Այնուամենայնիվ, իր ներկայությամբ Աստված մոտ է մարդկանց:

Ի՞նչ է նշանակում՝ ,,Քո անունը սուրբ լինի,,:

Դա Հայր մեր աղոթքի առաջին խնդրանքն է: Աստված սուրբ է: Հավատացյալները սրբացնում են նրա անունը նրանով, որ նրանք փառաբանում են նրան և ձգտում նրա կամքի համաձայն ապրել: Այս խնդրանքը միաժամանակ հիշեցնում է երկրորդ պատվիրանը:

Ի՞նչ է նշանակում՝ ,,Քո թագավորությունը գա,,:

խնդրանքով աղոթվում է, որ Աստծո էությունը համայնքում ավելի ու ավելի շատ ընդունելի լինի: Բացի դրանից, այս խոսքերով աղոթվում է, որ

Աստծո գալիք թագավորությունը տեսանելի լինի: Այն սկսվելու է Քրիստոսի գալստյան ժամանակ՝ իր հարսնացուական համայնքին իր մոտ տանելով:

Ի՞նչ է նշանակում՝ ,, Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես երկնքում է,,:
Երկնքում, այնտեղ, որտեղ Աստված է գահակալում, անսահմանափակ տիրում է նրա կամքը: Խնդրանքն ուղղված է նրան, որ երկրի վրա էլ ամեն ինչ նրա կամքի համաձայն կատարվի: Այս խոսքերով հավատացյալները աղոթում են նաև այն բանի համար, որ իրենց հաջողվի Աստծո կամքով գործել:

Ի՞նչ է նշանակում՝ ,, Մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,,:
Դրանով աղոթվում է այն ամենի համար, ինչի կարիքը մարդն ունի: Խնդրանքը ներառում է նաև այն, որ Աստված պահպանի իր ստեղծածը: Փոխաբերական իմաստով խնդրվում է նաև, որ Աստված իր խոսքը որպես ,, անմահ հոգու,, կերակուր տա:

Ի՞նչ է նշանակում՝ ,, Ներիր մեզ, մեր բոլոր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեզ պարտք եղողներին,,:
Բոլոր մարդիկ տանջվում են իրենց մեղքերի, պարտքերի պատճառով: Այս խոսքերով հավատացյալները Աստծո առաջ խոստովանում են իրենց մեղավոր լինելը և նրանից ներում են խնդրում: Քանի որ Աստված ողորմած է և ներում է, մեզնից սպասում է, որ մենք էլ ներենք նրանց, ովքեր մեր հանդեպ անարդարացի են եղել: Այսինքն՝ միայն այն դեպքում մենք ներում կստանանք, երբ ինքներս հաշտվողական ու ներելու պատրաստ լինենք:

Ի՞նչ է նշանակում՝ ,,Մի տանիր մեզ փորձության,,:
Հավատացյալները խնդրում են, որ Աստված իրենց օգնի՝ ամբողջ ուժով մեղքը հաղթահարելու: Սրանով նաև խնդրվում է, որ Աստված պահպանի հավատի դժվար փորձություններից:

Ի՞նչ է նշանակում՝ ,, Փրկիր մեզ չարից,,:
Այս խնդրանքը այն ցանկությունն է արտահայտում, որ Աստված ազատի չարի իշխանությունից: Վերջապես, խոսքն այն բանի մասին է, որ Աստված նվիրի վերջնական փրկություն, որ նա ընդմիշտ ազատի չարից: Աստծո Որդու մոտ ,, փրկությունը… դա մեղքերի թողությունն է,, / Կողոսացիներին 1;14/:

Ի՞նչ է նշանակում՝ ,,Քանի որ քոնն է թագավորությունը, զորությունը և փառքը՝ հավիտյանս հավիտենից,,:
Այս խոսքերը գովաբանում են Աստծուն / դեքսոլոգիա/: Դրանով Ամենակալը փառաբանվում տվիարժանանում: Հայացքն ուղղվում է դեպի նրա փրկչական պլանի լիակատար ավարտ, երբ փրկվածները իրավունք են ունենալու Աստծու հետ փառահեղության մեջ ապրելու:

Ի՞նչ է նշանակում՝ ,,Ամեն,,:
Այս բառը ծագել է եբրայերենից և թարգմանաբար նշանակում է՝ ,,Այդպես է լինելու,,: Այս բառով է ավարտվում Հայր մերը, և այն ամենը, ինչ ասվում է աղոթքում, մեկ անգամ ևս հաստատվում է:

Ե՞րբ է տեղի ունենում մեղքերի քավությունը ժամերգության ժամանակ:
Մեղքերի քավությունը տեղի է ունենում անմիջապես ,,Հայր մերի,, ընդհանրական աղոթքից հետո:

Ո՞րն է այն հիմքը, որի համաձայն մեղքերը կարող են ներվել:
Մեղքերը կարող են ներվել, որովհետև Աստված, ով սիրո Աստված է, իր Որդուն մարդկանց մոտ՝ երկիր ուղարկեց: Նա խաչի վրա իր մահով մարդկանց մեղքերի քավության համար հավերժ մնայուն զոհաբերություն կատարեց: Հիսուս Քրիստոսը հոժարությամբ իր կյանքը զոհաբերելով՝ սասանեց սատանայի իշխանությունը և նրա գործերը՝ մեղքն ու մահը, ու հաղթեց: Դրանից ի վեր հնարավոր դարձավ, որ մարդիկ մեղքերից ազատվեն / հմտ. Մատթեոս 26;28/: Հիսուսն իր կյանքը մեզ համար զոհաբերեց, որպեսզի մեր մեղքերը կարողանան ներվել և մենք ստիպված չլինենք մնալ մեղքի տիրապետության ներքո:

Ո՞վ է ներում մեղքերը:
Սուրբ Երրորդություն Աստվածն է, որ ներում է մեղքերը: Մարդն իր սեփական ուժերով ի վիճակի չէ մեղքերը քավելու և մեղքից ազատվելու. ,, Երանի այն մարդուն, որի մեղքերը Տերը նրան մեղք չի համարում,, / Հռոմեացիներին 4;8/:

Ի՞նչ ներգործություն է թողնում մեղքերի քավությունը:
Մեղքերի քավությամբ մաքրվում են մեղքերն ու վերացվում են Աստծո հանդեպ կուտակված պարտքերը: Հավատացյալներին, ում մեղքերը ներվել է, հաղորդում են Հիսուսի խաղաղությունը հետևյալ խոսքերով. ,, Հարություն առածի խաղաղությունը թող լինի բոլորիդ հետ,,: Երբ այդ խաղաղությունը հավատով են ընդունում սրտերում, ապա խուսափում են մեղքի հետևանքով առաջացած վախից: Անկախ մեղքերի քավության չափից, մարդը պետք է հետևողականություն և պատասխանատվություն ցուցաբերի իր մեղավոր պահվածքի համար՝ նյութական կամ իրավական տեսանկյունով:

Նախատեսում

02.10.2016	Բեռլին / Գերմանիա
09.10.2016	Լոզան / Շվեյցարիա
23.10.2016	Փերթ / Ավստրալիա
03.11.2016	Բուլավայո / Զամբիա
06.11.2016	Բլանթայր / Մալավի
20.11.2016	Հիլվերսում / Նիդերլանդներ
27.11.2016	Լոս Անջելես / ԱՄՆ
11.12.2016	Հանովեր / Գերմանիա
18.12.2016	Թեյփթաուն / Հր. Աֆրիկա
31.12.2016	Բիլ / Շվեյցարիա

New Apostolic Church
International